Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՋ-ԲՄԸ-ԲԲՍ220ՀԷՍ/ՆՆ-17/15.09.20-ԱՄ ծածկագրով գնման բաց մրցույթի

«ՀրազՋԷԿ» ԲԲԸ հայտարարում է բաց մրցույթ ԲԲՍ-220կՎ (220կՎ լարման բաց բաշխիչ սարքվածքներ) հիմնական էներգասարքավորումների վերազինման և արդիականացման նախագիծ-նախահաշիվ ձեռք բերելու համար:

Նախագիծ-նախահաշվի ներկայացման ժամկետ է սահմանվում մինչև 2021 թվականի փետրվարի 03-ը:

Մրցույթին կարող են մասնակցել ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձինք::

Հայտերը ներկայացնել հայերեն կամ ռուսերեն, մինչև 03.11.2020թ. ժամը14^{00}, «ՀրազՋԷԿ» ԲԲԸ, 2302, Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Գործարանային 1 հասցեով:

Հայտերի բացումը տեղի կունենա 03.11.2020թ. ժամը 14^{00}-ին, «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ում:

Մրցույթների պատվիրատուն և ֆինանսավորողը «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ն է:

Մրցույթի հաղթողի ընտրությունը կկատարվի գնային գնահատման սկզբունքով:

Մրցույթի հրավերի, փաթեթի և լրացուցիչ տեղեկությունների համար դիմել՝ «ՀրազՋԷԿ» ԲԲԸ, հեռ. (223) 6-07-12, ֆաքս (223) 2-36-12, էլ.փոստ՝ info@raztes.am :

Անհրաժեշտության դեպքում դիմել Ընկերության ԳՏՏ-գլխավոր ճարտարագետ, Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մնացականյանին, բջջ.հեռ (093) 93-22-33:

Ծրագիր

«ՀրազՋԷԿ» ԲԲԸ 220կՎ լարման բաց բաշխիչ սարքվածքներում (ԲԲՍ-220կՎ) տեղակայված էներգասարքավորումների վերազինման և արդիականացման

1. «ՀրազՋԷԿ» ԲԲԸ 220կՎ լարման ենթակայանի ընդանուր բնութագիրը.

1.1. 220կՎ լարման ԲԲՍ-220կՎ բաղկացած է 220կՎ I և II հավաքական դողերից և շրջանցիկ հավաքական դողերից: I և II հավաքական դողերն իրար հետ միացված են միջդողային անջատիչով:

1.2. ԲԲՍ-220կՎ-ին միացված են 5 հատ օդային գիծ՝«Մարաշ», «Կենտրոն», «Նորադուզ», «Գուգարք-1», «ՊՇԷԿ-1», 4հատ բլոկ՝ բլոկ-1, բլոկ-2, բլոկ-3, բլոկ-4, շրջանցիկ և միջդողային բջիջներ:

1.3. Ենթակայանի սարքավորումները մոնտաժվել են 1969-1976 թթ.: Ծրագիրն իր մեջ ընդգրկում է հին սարքավորումների ապամոնտաժում և նույն տեղում նոր սարքավորումների մոնտաժում:

1.4. Ենթակայանի շենքում անհրաժեշտ է իրականացնել ղեկավարման ավտոմատիկայի, ռելեական պաշտպանության հին վահանների ապամոնտաժում և նույն տեղում միկրոպրոցեսորային վահանների մոնտաժում:

2. Ծրագիրն իր մեջ ընդգրկում է.

2.1. ВВН-220կՎ տիպի օդային անջատիչների փոխարինում էլեգազային անջատիչներով՝ թվով 10 հատ:

2.2. ՀԿՓ-200կՎ տիպի լարման տրանսֆորմատորների փոխարինում նոր արտադրության լարման տրանսֆորմատորներով՝ թվով 7հատ:

2.3. ТФНД-220կՎ տիպի հոսանքին տրանսֆորմատորների փոխարինում նոր արտադրության հոսանքի տրանսֆորմատորներով՝ թվով 33հատ:

2.4. РЛНД3-220կՎ տիպի բաժանիչների փոխարինում նոր արտադրության բաժանիչներով՝ թվով 45հատ:

2.5. Օդային գծերի և շրջանցիկ անջատիչի, միջդողային անջատիչի հիմնական պաշտպանությունների փոխարինումը միկրոպրոցեսորային պաշտպանություններով:

2.6. Օդային գծերի և շրջանցիկ անջատիչի պահուստային պաշտպանությունների փոխարինումը միկրոպրոցեսորային պաշտպանություններով:

2.7. Մալուխային տնտեսության փոխարինումը նոր մալուխներով:

2.8. 200կՎ լարման հավաքական դողերի դիֆերենցիալ պաշտպանության և անջատիչների խափանման պահուստային հին վահանների փոխարինումը նոր վահաններով:

2.9. Աղդանշանային նոր համակարգի տեղադրումը:

2.10. Բաժանիչների և էլեգազային անջատիչների ղեկավարման վահանների նախագծում և մոնտաժում:

2.11. Բաց բաշխիչ սարքվածքների և սարքավորումների լուսավորության և տաքացման համակարգի նախագծում:

2.12. Էլեգազային անջատիչների, բաժանիչների և նրանց հողանցման դանակների բլոկավորման համակարգի նածագծում:

2.13. Շրջանցիկ անջատիչի բաժանիչների և միջդողային անջատիչի բաժանիչների, լարման տրանսֆորմատորի բաժանիչների, նրանց հողանցման դանակների բլոկավորման համակարգի նածագծում:

2.14. Օդային գծերի և շրջանցիկ անջատիչի ղեկավարման և ռելեական պաշտպանության շղթաները նախագծել միաֆազ, իսկ բլոկներինը եռաֆազ կառավարումով:

2.15. Իրականացնել օդային գծի հիմնական պաշտպանությունների (ДФЗ, ДЗЛ) 2 կիսահամակարգերի միջև կապն օպտիկաթելային մալուխների միջով:

2.16. Իրականացնել նոր վահանների հոսանքի և լարման շղթաների կապը էլեկտրոնային հաշվիչների և սկադա համակարգի PM130 PLUS տիպի պրիբորների նոր կապը:

2.17. Իրականացնել I և II հավաքական դողերի 200կՎ լարման տրանսֆորմատորների երկրորդային շղթաների փոխադարձ թողարկման համակարգը (առանձնի վահանների միջոցով):

2.18. ԲԲՍ-220կՎ շենքում նոր կուտակիչ մարտկոցի նախագծում:

2.19. 220կՎ լարման անջատիչների, բաժանիչների, պարպիչների լարման տրանսֆորմատորների, հոսանքի տրանսֆորմատորների հենարանների փոխարինումը նոր հենասյուներով:

2.20. 220կՎ լարմանРВМГ-220 տիպի պարպիչների փոխարինումը նոր գերլարման սահմանափակիչներով(ОПН-220կՎ):

ՀՐԱՎԵՐ

(Կազմված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի համաձայն)

1. Սույն հրավերը տրամադրվում է «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ի կողմից 2020թ. սեպտեմբերի 17-ին Տեղեկագրերում հրապարակված ՀՋ-ԲՄԸ-ԲԲՍ220ՀԷՍ/ՆՆ-17/15.09.20-ԱՄ ծածկագրով ԲԲՍ-220կՎ (220կՎ լարման բաց բաշխիչ սարքվածքներ) հիմնական էներգասարքավորումների վերազինման և արդիականացման նախագիծ-նախահաշվի գնման բաց մրցույթի հայտարարության հիման վրա:

2. Մրցույթի ծածկագիրը՝ ՀՋ-ԲՄԸ-ԲԲՍ220ՀԷՍ/ՆՆ-17/15.09.20-ԱՄ:
3. Հայտը ներկայացնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի համաձայն:

4. Մասնակցի որակավորման չափանիշները, մասնակցության իրավունքի պահանջները և դրանց գնահատումը կկատարվի ՀՀ կառավարության 04.05.2017թ. №526-Ն որոշման 59-րդ կետի պահանջներին համապատասխան, իսկ մասնակցի կողմից հայտարարություն չներկայացնելու դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածին համապատասխան:

5. Գնման առարկայի բնութագիրը՝

«ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ի ԲԲՍ-220կՎ (220կՎ լարման բաց բաշխիչ սարքվածքներ) հիմնական էներգասարքավորումների վերազինման և արդիականացման նախագիծ-նախահաշիվ:

6. Հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի ընտրությունը կկատարվի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ կետի 1) ենթակետով սահմանված կարգով՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:
:

7. Պայմանագրի նախագիծը տրամադրվում է մասնակցի գրավոր պահանջով:

8. Գնումն իրականցվում է մեկ փուլով: Նախագիծ-նախահաշվի ներկայացման ժամկետ է սահմանվում մինչև 2021թ. փետրվարի 03-ը:

9. Հայտով ներկայացվող առաջարկված գինը նշվում է ՀՀ դրամով, գրված թվերով և տառերով և ներառում է հաշվարկման կարգը:

10. Հայտով ներկայացված գնային ասառաջարկի հաշվարկը պետք է ներառի հայտատուի բոլոր ծախսերը:

11. Հայտի և պայմանագրի ապահովումն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32 և 35 հոդվածների համաձայն:

12. Հայտը ներկայացնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ փաստաթղթային ձևով, մեկ բնօրինակ, հայերեն

կամ ռուսերեն, մինչև 03. 11. 2020թ. ժամը14^{00}, «ՀրազՋԷԿ» ԲԲԸ, 2302, Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Գործարանային 1 հասցեով:

13.Մրցույթին առնչվող հարցերով դիմել՝ «ՀրազՋԷԿ» ԲԲԸ, գնահատող հանձնաժողովի քարտուղարին,
հեռ. (223) 6-07-12, www.raztes.am:

14. Հայտերը կբացվեն 2020թ. նոյեմբերի 03-ին ժամը 14.00-ին նշանակված նիստում, ըստ հայտերի գրանցամատյանի հերթականության:

15. Սույն գնման գործընթացում գնահատող հանձնաժողովը ղեկավարվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. № 526-Ն որոշման դրույթներով:

16. Պայմանագիրը կկնքվի մրցույթում ընտրված մասնակցի հետ անգործության ժամկետը լրանալուց հետո:

17. Գնման գործընթացի հետ կապված գործողությունները կամ ընդունված որոշումները բողոքարկելու՝ մասնակցի իրավունքը և կարգը սահմանված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46 և 50 հոդվածներով:

18. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող հայտերը գնահատող հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է:

19. Սույն գնման հայտի առնչությամբ պատվիրատուն այլ տեղեկատվություն չունի:

ԳՏՏ-գլխավոր ճարտարագետ,
Գնահատող հանձնաժողովի նախագահ Ա.Մնացականյան